**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2022 թվականի թիվ 127-Ա

## «ԱՐԱՔՍ ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի ապրիլի 5-ի նիստում, քննարկելով «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

***<u>1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.</u>***

Հանձնաժողովը 2021 թվականի հոկտեմբերի 12-ին «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 283-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 283-Ա որոշում**) հարուցել է վարույթ (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Ընկերությունը թիվ 283-Ա որոշումը ստացել է 2021 թվականի հոկտեմբերի 19-ին և 2021 թվականի հոկտեմբերի 28-ին Հանձնաժողով է ներկայացրել սույն գործի վերաբերյալ դիրքորոշում:

Ընկերությունը 2021 թվականի դեկտեմբերի 2-ին Հանձնաժողով է ներկայացրել լրացուցիչ դիրքորոշում:

Հանձնաժողովը 2021 թվականի դեկտեմբերի 21-ին «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 283-Ա որոշմամբ հարուցված վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 374-Ա որոշմամբ Վարույթի ժամկետը երկարաձգվել է 2022 թվականի հունվարի 12-ից եռամսյա ժամկետով:

Վարույթի շրջանակներում 2022 թվականի հունվարի 11-ին տեղի է ունեցել Հանձնաժողովի նիստ (այսուհետ նաև՝ **Նիստ**), որի ընթացքում քննարկվել է Վարույթում

առկա փաստական հանգամանքների վերաբերյալ հարցը: Նիստին մասնակցել են նաև Ընկերության ներկայացուցիչները:

Ընկերությունը 2022 թվականի մարտի 23-ին Հանձնաժողով է ներկայացրել լրացուցիչ դիրքորոշում՝ հայտնելով, որ Ընկերությունը անբարեխիղճ մրցակցությամբ հասարակությանը մոլորեցման նպատակ չի հետապնդել, պատրաստակամ է Ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա հետագայում չօգտագործել «eoos» մակնշումը, իսկ 6 հատանոց տուփով հավի ձվի կճեպի վրա չմակնշել «ԷԿՈՍ» բառը:

Միաժամանակ, Ընկերությունը նշել է, որ վերը ներկայացված փոփոխությունների կատարումը պահանջում են արտադրական պրոցեսում համապատասխան գործողությունների իրականացում՝ նոր պիտակների տպագրություն, մակնշող սարքավորման վրա ձևափոխումների իրականացում, ինչը կապված է նաև արտերկրից համապատասխան մասնագետների ՀՀ հրավիրման հետ, Ընկերությունը հայտնել է, որ վերը ներկայացված փոփոխությունները կիրականացվեն շուրջ մեկ ամսյա ժամկետում:

## ***2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.***

Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 6-ի «Դիտանցումներ իրականացնելու մասին» թիվ 148-Ա հրամանի հիման վրա իրականացվել է դիտանցում:

Դիտանցման արդյունքում արձանագրվել է, որ «Երևան Սիթի» սուպերմարկետում վաճառքում առկա են Ընկերության կողմից արտադրված 6 հատանոց տուփով հավի ձու, «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքատեսակներ (այսուհետ նաև՝ **Ապրանքներ**), որոնց տուփերի կամ փաթեթվածքների վրա առկա է «eoos» մակնշումը:

Բացի այդ, արձանագրվել է, որ Ընկերության կողմից արտադրվող 6 հատանոց տուփով հավի ձվի կճեպի վրա մակնշված է «ԷԿՈՍ» բառը:

Վարույթը հարուցվել է Ընկերության կողմից արտադրված «eoos» մակնշմամբ Ապրանքների և հավի ձվի կճեպի վրա «ԷԿՈՍ» բառի մակնշմամբ հավկիթների իրացման միջոցով առևտրային հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առկայության հիմքով:

## ***3. Ընկերության դիրքորոշումը.***

Ընկերությունը 2021 թվականի հոկտեմբերի 28-ի գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից արտադրվող Ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա օգտագործվել է «eoos» ապրանքային նշանը, որը խորհրդանշում է «հավն է ձվից, թե ձուն հավից» անպատասխան հարցի հավերժությունը, իսկ դրա գրանցման ուղղությամբ ներկայումս Ընկերությունն իրականացնում է համապատասխան գործողություններ:

Ընկերությունը գտնում է, որ «eoos» ապրանքային նշանի օգտագործումը հակասություն չի առաջացնում «Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

Ինչ վերաբերում է 6 հատանոց տուփով հավի ձվի կճեպի վրա մակնշված «ԷԿՈՍ» բառին, ապա Ընկերությունը նշել է, որ օգտագործվել է հունական համանուն տեղանվան

անվանումը, և Ընկերությունն այս դեպքում անբարեխիղճ մրցակցությամբ հասարակությանը մոլորեցման նպատակ չի հետապնդել:

Միաժամանակ Ընկերությունը նշել է, որ Հանձնաժողովի կողմից հավի ձվի կճեպի վրա «ԷԿՈՍ» բառի մակնշումը որպես «Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող ճանաչելու դեպքում Ընկերությունը պատրաստակամ է սեղմ իրատեսական ժամկետներում փոփոխել հավի ձվի կճեպի վրա մակնշվող անվանումը:

Ընկերությունը 2021 թվականի դեկտեմբերի 2-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ «eco» տեսակի ապրանքանիշ և արտադրանք ներկայումս Ընկերությունը չունի, այն տևական ժամանակ է հանված է արտադրությունից, հետևաբար նաև շրջանառությունից:

Ինչ վերաբերում է «Լուստելեկոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ք. Երևան, Ադոնցի 6 հասցեում հայտնաբերված 6 հատանոց տուփով, «eco» մակնշմամբ պիտակով, հավկիթի վրա մակնշված «ԷԿՈՍ» գրառմամբ ապրանքին, Ընկերությունը հայտնել է, որ Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2021 թվականի նոյեմբերի 17-ի թիվ ԱՎ-2886 գրությունը ստանալուց անմիջապես հետո իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ տեղի է ունեցել թուրիմացություն: Մասնավորապես, «ԷԿՈՍ» մակնշմամբ ապրանքատեսակի հավկիթները, սխալմամբ, աննշան խմբաքանակով՝ շուրջ 15 տուփ, փաթեթավորման բաժնի աշխատակցի անփութության հետևանքով, պիտակավորվել են շրջանառությունից դուրս եկած «eco» պիտակներով:

Ընկերությունը նշել է, որ վերը նշվածի ուղղությամբ ձեռնարկվել են համապատասխան քայլեր, մասնավորապես սխալ պիտակավորված ապրանքը հանվել է շրջանառությունից, իսկ շրջանառությունից հանված, Ընկերության պահեստում մնացած պիտակները ոչնչացվել են: Այն, որ տեղի է ունեցել թյուրիմացություն փաստվում է նաև այն հանգամանքով, որ հավկիթները մակնշված են եղել «ԷԿՈՍ» գրառմամբ, սակայն պիտակավորվել են այլ պիտակով:

Նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչները պնդել են Հանձնաժողով ներկայացված Ընկերության գրավոր դիրքորոշումը՝ միաժամանակ հայտնելով, որ Հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի ««Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 283-Ա որոշմամբ հարուցված վարույթի շրջանակներում Ընկերությունը «eco» բառի մակնշումից հրաժարվելուց հետո մշակվեց նոր ապրանքային նշան: Նոր ապրանքային նշան մշակելու ժամանակ Ընկերությունն օգտվել է նախկինում Գրուպում օգտագործվող մյուս ապրանքային նշանից, որը նույնությամբ չի կրկնվում, այլ ենթարկվել է որոշակի ձևափոխությունների: Բացի այդ, Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ Ընկերությունը զուգահեռ սկսել է տվյալ ապրանքային նշանը Մտավոր սեփականության գրասենյակում գրանցելու գործընթաց:

Հաշվի առնելով, որ «Ձվի և ձվամթերքի» տեխնիկական կանոնակարգով սահմանվում է, որ ձուն պետք է ունենա հայերեն մակնշում, ինչպես նաև այց է կատարվել Էկոս կղզի և ծանոթանալով կղզու մշակույթին՝ Ընկերության կողմից որոշում է կայացվել օգտագործել «ԷԿՈՍ» ապրանքային նշանը:

Ընկերության ներկայացուցիչը հայտնել է նաև, որ «ԷԿՈՍ» ապրանքային նշանը որևէ կերպ շփոթություն չի առաջացնում սպառողների մոտ, քանի որ ոչ ծավալային, ոչ էլ փաստացի հետևանքների իմաստով Ընկերությունն արձանագրում չունի: Բացի այդ, Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ հասարակությանը մոլորեցնելու նպատակ չի ունեցել:

Ընկերությունը 2022 թվականի մարտի 23-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ Ընկերությունը անբարեխիղճ մրցակցությամբ հասարակությանը մոլորեցման նպատակ չի հետապնդել, պատրաստակամ է Ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա հետագայում չօգտագործել «eoos» մակնշումը, իսկ 6 հատանոց տուփով հավի ձվի կճեպի վրա չմակնշել «ԷԿՈՍ» բառը:

Միաժամանակ, Ընկերությունը նշել է, որ վերը ներկայացված փոփոխությունների կատարումը պահանջում են արտադրական պրոցեսում համապատասխան գործողությունների իրականացում՝ նոր պիտակների տպագրություն, մակնշող սարքավորման վրա ձևափոխումների իրականացում, ինչը կապված է նաև արտերկրից համապատասխան մասնագետների ՀՀ հրավիրման հետ, Ընկերությունը հայտնել է, որ վերը ներկայացված փոփոխությունները կիրականացվեն շուրջ մեկամսյա ժամկետում:

***<u>4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.</u>***

1) Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 6-ի «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 148-Ա հրամանի հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 7-ին «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող ք. Երևան, Կոմիտասի 60/2 հասցեում գործող «Երևան Սիթի» սուպերմարկետում իրականացվել է դիտանցում, որի արդյունքում կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 148 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 148 արձանագրություն**):

Թիվ 148 արձանագրության համաձայն՝ «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Երևան Սիթի» սուպերմարկետում (հասցե՝ Կոմիտասի 60/2) վաճառվում են Ընկերության կողմից արտադրվող Ապրանքները, որոնց վրա առկա է «eoos» մակնշումը:

Բացի այդ, արձանագրվել է, որ Ընկերության կողմից արտադրվող 6 հատանոց տուփով հավի ձվի կճեպի վրա մակնշված է «ԷԿՈՍ» բառը:

Թիվ 148 արձանագրությանը կից լուսանկարների համաձայն՝ «հավ պաղեցված» ապրանքատեսակի վրա առկա է ինքնակպչուն տեղեկատվական պիտակ, որի վրա առկա է հետևյալ տեղեկատվությունը. «թարմ հավ էկո ափսե կգ, փաթեթավոր. 06.10.2021, ՔԱՇ 1,710, ԳԻՆԸ 1870, ԳՈՒՄԱՐ 3198»:

2) Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ԳԳ-2577 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ-2577 գրություն**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. Ապրանքների իրացման սկզբնաժամկետի վերաբերյալ՝ նշելով ամսաթիվը,

2. Ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա «ԷԿՈՍ» բառի մակնշման շարժառիթների վերաբերյալ,

3. 2020 թվականի տարեկան և 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում Ապրանքների արտադրության և իրացման ծավալների վերաբերյալ՝ բնեղեն և արժեքային արտահայտությամբ (առանձնացված՝ ըստ Ապրանքների և ըստ տարիների):

Ընկերությունը 2021 թվականի հոկտեմբերի 28-ին Հանձնաժողովին ներկայացրել պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն.

1. Ընկերությունը վերը նշված ապրանքային նշանը օգտագործում է :

2. Ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա օգտագործվել է «eoos» ապրանքային նշանը, որը խորհրդանշում է «հավն է ձվից, թե ձուն հավից» անպատասխան հարցի հավերժությունը, իսկ դրա գրանցման ուղղությամբ ներկայումս Ընկերությունն իրականացնում է համապատասխան գործողություններ: 6 հատանոց տուփով հավի ձվի կճեպի վրա մակնշված «ԷԿՈՍ» բառը օգտագործվել է որպես հունական համանուն տեղանվան անվանում:

3. Ընկերությունը 6 հատանոց տուփով հավի ձու իրացրել է տուփ՝ ընդհանուր դրամի չափով, «պաղեցված հավի դոշ» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով, «պաղեցված հավի թև» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով, «պաղեցված հավի բուդ» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով, «պաղեցված հավ» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով:

3) Հանձնաժողովի նախագահի՝ 2021 թվականի նոյեմբերի 15-ի «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 176-Ա հրամանի հիման վրա 2021 թվականի նոյեմբերի 15-ին «Լուստելեկոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող ք. Երևան, Ադոնցի 6 հասցեում գործող «Չինար» սուպերմարկետում իրականացվել է դիտանցում, որի արդյունքում կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 176 արձանագրությունը (այսուհետ նաև՝ թիվ 176 արձանագրություն):

Թիվ 176 արձանագրության համաձայն՝ «Լուստելեկոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող (հասցե՝ ք. Երևան, Ադոնցի 6) «Չինար» սուպերմարկետում վաճառվում է Ընկերության կողմից արտադրվող 6 հատանոց տուփով «eco» մակնշումով, բարձր որակի հավկիթ: Հավկիթի կճեպի վրա մակնշված է «ԷԿՈՍ» բառը: Համաձայն մակնշման՝ տվյալ ապրանքը արտադրված է 2021 թվականի նոյեմբերի 11-ին:

4) Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի 2021 թվականի հուլիսի 21-ի թիվ ՀԿ-1833 գրությանը ի պատասխան, ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության 2020 թվականի հասույթի չափը կազմել է դրամ:

5) Հանձնաժողովի կողմից դիտարկվել է Ընկերության www.araxpf.am կայքը, որի արդյունքում պարզվել է, որ տվյալ կայքում Ապրանքները ներկայացվում են «ԷԿՈս» և «ECOs» ապրանքային նշանների ներքո, իսկ նույն կայքի «ինտերնետ խանութ» բաժնում Ապրանքները ներկայացվում են որպես «Էկո»: Մասնավորապես՝ «Էկո էքստրա 15 տեղանոց», «Էկո էքստրա 6 տեղանոց», «Էկո էքստրա 10 տեղանոց», «Էկո Ափսե ֆիլե (թարմ)», «Էկո Ափսե թև (թարմ)», «Էկո Ափսե բուդ (թարմ)», «Հավ պաղեցված էկո»:

6) Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մարտի 7-ի թիվ ԳԳ-521 գրությամբ Հանձնաժողովը դիմել ՊԵԿ-ին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն՝

1. Ընկերության կողմից 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում «eoos» մակնշմամբ Ապրանքների իրացումից ստացված հասույթի չափերի վերաբերյալ՝ առանձնացված ըստ ապրանքների,

2. Ընկերության կողմից 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում «ԷԿՈՍ» մակնշմամբ հավի ձվի իրացումից ստացված հասույթի չափի վերաբերյալ,

3. Ընկերության կողմից 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում, բացի «eoos» մակնշմամբ Ապրանքներից, այլ հավի ձվի, պաղեցված հավի, պաղեցված հավի բդի, պաղեցված հավի թևի, պաղեցված հավի դոշի և պաղեցված հավի դոշի ֆիլեի իրացումից ստացված հասույթի չափերի վերաբերյալ՝ առանձնացված ըստ ապրանքների, իսկ անհնարինության դեպքում դուրս գրված բոլոր հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված գործարքների վերաբերյալ:

ՊԵԿ-ը 2022 թվականի մարտի 15-ին Հանձնաժողով է ներկայացրել պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝ Ընկերությունը 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրացրել է «ԷԿՈՍ» մակնշմամբ կիլոգրամ թարմ բուդ՝ ընդհանուր դրամ արժեքով, թարմ թև կիլոգրամ՝ ընդհանուր դրամ արժեքով, կիլոգրամ թարմ դոշ՝ ընդհանուր դրամ արժեքով, կիլոգրամ թարմ պաղեցված հավ՝ ընդհանուր դրամ արժեքով, հատ թարմ ճուտ՝ ընդհանուր դրամ արժեքով, կիլոգրամ թարմ ֆիլե՝ ընդհանուր դրամ արժեքով և տուփ ձու՝ ընդհանուր դրամ արժեքով:

Նույն տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից հետ է կանչվել այլ տնտեսվարող սուբյեկտների միջոցով իրացվող «ԷԿՈ» մակնշմամբ տուփ ձու՝ ընդհանուր դրամ արժեքով:

***<u>5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>***

1. Ընկերության կողմից արտադրվում և իրացվում են 6 հատանոց տուփով հավի ձու, «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքատեսակներ, որոնց տուփերի կամ փաթեթվածքների վրա առկա է «eoos» մակնշումը, որտեղ «oo» տառերը մակնշված են

«co» տառերին նմանվող հատուկ ձևավորմամբ, ինչպես նաև 6 հատանոց տուփով հավի ձվի կճեպի վրա առկա է «ԷԿՈՍ» բառի մակնշում:

Բացի այդ, Ընկերության կողմից արտադրվում և իրացվում է 6 հատանոց տուփով «eco» մակնշումով հավկիթ, որի կճեպի վրա նույնպես առկա է «ԷԿՈՍ» բառի մակնշում: Համաձայն մակնշման՝ տվյալ ապրանքը արտադրված է 2021 թվականի նոյեմբերի 11-ին:

2. Ապրանքները չունեն օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրեր (սերտիֆիկատներ):

3. Ընկերությունը հայտնել է, որ Ապրանքները սկսել է իրացնել

:

4. Ընկերության www.araxpf.am կայքում Ապրանքները ներկայացվում են «ԷԿՈս» և «ECOs» ապրանքային նշանների ներքո, իսկ նույն կայքի «ինտերնետ խանութ» բաժնում Ապրանքները ներկայացվում են որպես «Էկո»: Մասնավորապես՝ «Էկո էքստրա 15 տեղանոց», «Էկո էքստրա 6 տեղանոց», «Էկո էքստրա 10 տեղանոց», «Էկո Ափսե ֆիլե (թարմ)», «Էկո Ափսե թև (թարմ)», «Էկո Ափսե բուդ (թարմ)», «Հավ պաղեցված էկո»:

5. Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 30-ի ««Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 212-Ա որոշմամբ Ընկերության գործողությունն ու վարքագիծը՝ այն է Ընկերության կողմից 10 հատանոց տուփով «NATURE FOOD» անվանումով և «ECO» նշումով հավի ձու, 10 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, 6 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, «eco» մակնշումով հավի դոշի ֆիլե, «eco» մակնշմամբ «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև» և «պաղեցված հավի դոշ» ապրանքների իրացումն այն դեպքում, երբ այդ ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, որակվել է որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում:

6. Ընկերությունը 2021 թվականի մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրացրել է ընդհանուր դրամի չափով «ECO» մակնշմամբ ապրանքներ: Մասնավորապես՝ 10 հատանոց տուփով «NATURE FOOD» անվանումով և «ECO» նշումով հավի ձու – տուփ՝ ընդհանուր դրամ արժեքով, 10 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու - տուփ՝ ընդհանուր դրամ արժեքով, 6 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու – տուփ՝ ընդհանուր դրամ արժեքով, «eco» մակնշումով հավի դոշի ֆիլե – կգ.՝ ընդհանուր դրամ արժեքով, «պաղեցված հավ» - կգ.՝ ընդհանուր դրամ արժեքով, «պաղեցված հավի բուդ» - կգ.՝ ընդհանուր , «պաղեցված հավի թև» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով և «պաղեցված հավի դոշ» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով:

7. Ընկերությունը հայտնել է, որ 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում իրացրել է «ԷԿՈՍ» մակնշմամբ 6 հատանոց տուփով հավի ձու իրացրել է տուփ՝ ընդհանուր դրամի չափով,

«պաղեցված հավի դոշ» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով, «պաղեցված հավի թև» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով, «պաղեցված հավի բուդ» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով, «պաղեցված հավ» - կգ.՝ ընդհանուր դրամի չափով:

8. Վարույթի շրջանակներում Ընկերությունը հայտնել է, պատրաստակամ է Ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա հետագայում չօգտագործել «eoos» մակնշումը, իսկ 6 հատանոց տուփով հավի ձվի կճեպի վրա չմակնշել «ԷԿՈՍ» բառը:

9. Ընկերության 2020 թվականի հասույթի չափը կազմել է դրամ:

10. ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրացրել է «ԷԿՈՍ» մակնշմամբ կիլոգրամ թարմ բուդ՝ ընդհանուր դրամ արժեքով, թարմ թև կիլոգրամ՝ ընդհանուր դրամ արժեքով, կիլոգրամ թարմ դոշ՝ ընդհանուր դրամ արժեքով, կիլոգրամ թարմ պաղեցված հավ՝ ընդհանուր դրամ արժեքով, հատ թարմ ճուտ՝ ընդհանուր դրամ արժեքով, կիլոգրամ թարմ ֆիլե՝ ընդհանուր դրամ արժեքով և տուփ ձու՝ ընդհանուր դրամ արժեքով:

Նույն տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից հետ է կանչվել այլ տնտեսվարող սուբյեկտների միջոցով իրացվող «ԷԿՈ» մակնշմամբ տուփ ձու՝ ընդհանուր դրամ արժեքով:

***<u>6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.</u>***

***1) <u>Ընկերության կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.</u>***

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է գործողությունը անբարեխիղճ դիտարկելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի

հատկանիշները պարունակող գործողությունները, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը.

1. հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

2. խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Տվյալ դեպքում տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցվել է անբարեխիղճ մրցակցության դրսևորման՝ հասարակության մոլորեցման վերաբերյալ, ուստի քննարկման ենթակա է Ընկերության կողմից հասարակության մոլորեցման հարցը:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստումն իրականացնում է սերտիֆիկացման մարմինը «օրգանական» կամ «անցումային շրջանի օրգանական» սերտիֆիկատ տալու միջոցով: Սերտիֆիկատի տրման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ օրգանական գյուղատնտեսական արտադրանքի մակնշման մեջ,

ինչպես նաև գովազդում նշվում է «օրգանական» կամ մակնշման առումով համարժեք «էկոլոգիական», «էկոլոգիապես մաքուր», «բիոլոգիական» տերմինները կամ դրանց «էկո», «բիո» կամ կրճատ այլ ձևերը՝ առանձին կամ հարադիր, միայն այն դեպքում, եթե՝

1) այն օրգանական գյուղատնտեսության վարման մեթոդով արտադրված և հավաստված (սերտիֆիկացված) արտադրանք է,

2) ներմուծվող արտադրանքն ուղեկցվում է օրգանական գյուղատնտեսության կանոններով սահմանված համապատասխանության հավաստման փաստաթղթերով:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի արտադրություն և (կամ) շրջանառություն իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող և (կամ) շրջանառվող սննդամթերքի և (կամ) սննդամթերքի մատուցման ծառայությունների անհատականացման միջոցներում արգելվում է օգտագործել «օրգանական», «էկոլոգիական», «բիոլոգիական» բառերը կամ դրանց «էկո», «բիո» կամ կրճատ այլ ձևերը՝ առանձին կամ հարադիր, բացառությամբ զուտ օրգանական գյուղատնտեսական արտադրանք արտադրող և (կամ) շրջանառող և (կամ) ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող և (կամ) շրջանառվող օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և (կամ) օրգանական գյուղատնտեսական արտադրանքի ծառայությունների մատուցման անհատականացման միջոցների:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ տարածքում շրջանառության մեջ գտնվող օրգանական գյուղատնտեսական արտադրանքը պետք է մակնշված լինի համապատասխան նշանով և ուղեկցվի սերտիֆիկատով: Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման և պիտակավորման կարգը, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության արտադրանքի համապատասխանության նշանի, համապատասխանության սերտիֆիկատի ձևերը հաստատում է ՀՀ կառավարությունը:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրի (սերտիֆիկատի) բացակայությամբ՝ գյուղատնտեսական արտադրանքի մակնշման մեջ, ինչպես նաև գովազդում «օրգանական» կամ մակնշման առումով համարժեք «էկոլոգիական», «էկոլոգիապես մաքուր», «բիոլոգիական» տերմինների կամ դրանց «էկո», «բիո» կամ կրճատ այլ ձևերի՝ առանձին կամ հարադիր բառերի օգտագործումը պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության տարրեր: Այսինքն, օրենսդրությամբ արգելված է օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրի (սերտիֆիկատի) բացակայության դեպքում արտադրանքի մակնշելիս կամ գովազդելիս օգտագործել «էկո» բառն անկախ օգտագործման նպատակներից և հարադիր կառուցվածքներից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության կողմից արտադրվում և իրացվում է 6 հատանոց տուփով հավի ձու, որի տուփի վրա մեջտեղի հատվածում առկա է խոտերի մեջ ձվի պատկեր, իսկ դրա վերևի հատվածում կանաչ ֆոնի վրա սպիտակ տառերով նշված է հետևյալ գրառումը. «բարձր որակի հավկիթ «eoos»», որտեղ «oo» տառերը մակնշված են «co» տառերին նմանվող հատուկ ձևավորմամբ, ընդ որում՝ տվյալ արտահայտության մեջ «eoos» բառն ավելի մեծ տառաչափով է նշված, քան մնացած բառերը: Իսկ տվյալ ձվերի կճեպի վրա մեծ տառաչափով մակնշված է «ԷԿՈՍ» բառը:

Ընկերության կողմից արտադրվում և իրացվում են «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա մեջտեղի հատվածում առկա է խոտերի մեջ աքլորի պատկեր, որի վերևի հատվածում կանաչ ֆոնի վրա սպիտակ տառերով նշված է հետևյալ գրառումը. «բարձր որակի միս «eoos»», որտեղ «oo» տառերը մակնշված են հատուկ ձևավորմամբ և ընկալվում են որպես «co» տառեր, ընդ որում՝ տվյալ արտահայտության մեջ «eoos» բառն ավելի մեծ տառաչափով է նշված քան մնացած բառերը:

Բացի այդ, Ընկերության կողմից 2021 թվականի նոյեմբերի 11-ին արտադրվել և իրացվել է 6 հատանոց տուփով հավկիթ, որի տուփի վրա մակնշված է «eco» բառը, իսկ տվյալ ձվի կճեպի վրա առկա է «ԷԿՈՍ» բառի մակնշում:

ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ապրանքներն իրացվում են «ԷԿՈՍ» ապրանքային նշանի ներքո:

Թիվ 148 արձանագրությանը կից լուսանկարների համաձայն՝ «հավ պաղեցված» ապրանքատեսակի վրա առկա ինքնակպչուն տեղեկատավական պիտակի վրա, ի թիվս այլնի, նշված է «թարմ հավ էկո» տեղեկատվությունը:

Վարույթի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշման և գործում առկա փաստերի վերլուծությունից պարզ է դառնում, որ Ապրանքները օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրեր (սերտիֆիկատներ) չունեն: Այսինքն՝ Ապրանքները օրգանական գյուղատնտեսության վարման կանոններով արտադրված չեն:

Ստացվում է, որ Ընկերության կողմից արտադրվում և իրացվում է հավի ձու, որի տուփի վրա մեջտեղի հատվածում առկա է խոտերի մեջ ձվի պատկեր, իսկ դրա վերևի հատվածում կանաչ ֆոնի վրա սպիտակ տառերով նշված է հետևյալ գրառումը. «բարձր որակի հավի միս «eoos»», որտեղ «oo» տառերը մակնշված են «co» տառերին նմանվող հատուկ ձևավորմամբ, ընդ որում՝ տվյալ արտահայտության մեջ «eoos» բառն ավելի մեծ տառաչափով է նշված, քան մնացած բառերը, իսկ տվյալ ձվերի կճեպի վրա մեծ տառաչափով մակնշված է «ԷԿՈՍ» բառը: Այսինքն, հավի ձվի կճեպի վրա մակնշված «ԷԿՈՍ» բառի և տվյալ հավի ձվի տուփի վրա մակնշված «eoos» բառի միաժամանակյա առկայությունը ընկալվում է որպես «ԷԿՈՍ»:

Այսպիսով, Ընկերության կողմից արտադրվող և իրացվող հավի ձվի տուփի վրա «eoos», իսկ կճեպի վրա «ԷԿՈՍ» բառերի մակնշման և տվյալ հավի ձվի տուփի վրա առկա պատկերների ու գրառումների (տուփի վրա մեջտեղի հատվածում խոտերի մեջ ձվի պատկերը, իսկ դրա վերևի հատվածում կանաչ ֆոնի վրա սպիտակ տառերով նշված

«բարձր որակի հավկիթ «eoos» գրառումը, ընդ որում՝ տվյալ արտահայտության մեջ «eoos» բառն ավելի մեծ տառաչափով է նշված, քան մնացած բառերը) համադրությունը սպառողների մոտ կարող է տպավորություն ստեղծել, որ տվյալ հավի ձվերը հանդիսանում են օրգանական գյուղատնտեսության արտադրանք:

Ընկերության կողմից արտադրվող և իրացվող «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքների տուփերի և փաթեթվածքների վրա առկա է նույն գրառումներն ու պատկերները, այդ թվում՝ նույն գունային համակցությունը, ինչ հավի ձվի տուփի վրա, բացառությամբ ձվի պատկերի (ձվի պատկերի փոխարեն նշված է աքլորի պատկերը), իսկ «բարձր որակի հավկիթ «eoos» գրառման մեջ «հավկիթ» բառի փոխարեն օգտագործվում է «միս» բառը:

Նշված հանգամանքը վկայում է այն մասին, որ սպառողները տեսնելով «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքների տուփերի և փաթեթվածքների վրա առկա նույն գրառումներն ու պատկերները, այդ թվում՝ նույն գունային համակցությունը, ինչ հավի ձվի տուփի վրա՝ վերջիններիս մոտ կառաջացնի նշված ապրանքների վերաբերյալ նույն ընկալումը, ինչ հավի ձվի դեպքում: Այսինքն, «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքների տուփերի և փաթեթվածքների վրա մակնշված «eoos» գրառման մակնշումը սպառողները կընկալեն որպես «ԷԿՈՍ»:

Նման պայմաններում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ Տախիստոսկոպյան մեթոդիկային, որը հանդիսանում է արագ տեսողական արձագանքմանն ուղղված գործիք և կիրառվում է ընկալման արագության և հստակության չափման համար: Այն թույլ է տալիս ամրագրել, որ սպառողի կողմից ապրանքի ճանաչումը միջին ժամանակահատվածում կազմում է ¼-րդ վայրկյան (տես https://cyberleninka.ru/article/n/tahistoskopicheskaya-metodika-v-issledovanii-smesheniya-tovarnyh-znakov հղումով):

Վերը նշված ողջ փաստերի և հանգամանքների համադրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ սպառողները Ապրանքները ընտրելիս (միջինը ¼-րդ վայրկյանում) դրանց տուփերի կամ փաթեթվածքների վրա «eoos» և հավի ձվի կճեպի վրա «ԷԿՈՍ» գրառումների մակնշումները տեսնելով՝ այն կարող են ընկալել որպես Ապրանքների հավաստված (սերտիֆիկացված) օրգանական գյուղատնտեսական արտադրանք լինելու հավաստում:

Հանձնաժողովը նման եզրահանգման համատեքստում ուշադրությանն է արժանացնում հետևյալ հանգամանքները"

1. Ընկերության www.araxpf.am կայքում Ապրանքները ներկայացվում են «ԷԿՈս» և «ECOs» ապրանքային նշանների ներքո, իսկ նույն կայքի «ինտերնետ խանութ» բաժնում Ապրանքները ներկայացվում են որպես «էկո»: Մասնավորապես՝ «էկո էքստրա 15 տեղանոց», «էկո էքստրա 6 տեղանոց», «էկո էքստրա 10 տեղանոց», «էկո Ափսե ֆիլե (թարմ)», «էկո Ափսե թև (թարմ)», «էկո Ափսե բուդ (թարմ)», «Հավ պաղեցված էկո»,

2. ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ապրանքներն իրացվում են «ԷԿՈՍ» անվանման ներքո,

3. Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 30-ի թիվ 212-Ա որոշման համաձայն՝ նախկինում առանց օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրի Ընկերության կողմից օգտագործվել է «eco» բառը նույն ապրանքների վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա «eoos» և «ԷԿՈՍ» գրառումները մակնշելն այն դեպքում, երբ Ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանքներ, պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ: Ընդ որում, Ընկերությունը հայտնել է, որ պատրաստակամ է Ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա հետագայում չօգտագործել «eoos» մակնշումը, իսկ 6 հատանոց տուփով հավի ձվի կճեպի վրա չմակնշել «ԷԿՈՍ» բառը՝ ըստ էության ընդունելով իրեն վերգրվող իրավախախտման փաստը:

***<u>2) Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>***

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման

մեթոդաբանությունը (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 6-րդ կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է վարույթի ընթացքում հաստատված փաստական հանգամանքների քննարկման արդյունքում Հանձնաժողովի հայեցողությամբ՝ հաշվի առնելով Մեթոդաբանությամբ ամրագրված դրույթները և վարույթի առանձնահատկությունները:

Մեթոդաբանության 12-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկվում է հետևյալ փուլերով.

1) որոշվում է տուգանքի բազային գումարը.

2) գնահատվում են վարույթի ընթացքում հաստատված ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, և հիմքերի առկայության դեպքում բազային գումարը ենթարկվում է համապատասխան փոփոխությունների.

3) Մեթոդաբանությամբ նախատեսված դեպքերում համապատասխանեցվում է պատասխանատվության միջոցը:

Մեթոդաբանության 13-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը տուգանքը հաշվարկում է Տ = Բ + Բ x (Ծ - Մ) բանաձևով, որտեղ՝ Տ-ն տուգանքի չափն է, Բ-ն տուգանքի բազային գումարն է, Ծ-ն բոլոր ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է, Մ-ն բոլոր մեղմացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է:

***<u>Բազային գումարի հաշվարկը</u>.***

Մեթոդաբանության 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունը ըստ բնույթի մրցակցային իրավախախտում է:

Մեթոդաբանության 14-րդ կետի համաձայն՝ մրցակցային իրավախախտումների դեպքում տուգանքի բազային գումարը որոշվում է ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարի, իրավախախտման համապատասխան ծանրության խմբի համար սահմանված տոկոսի և իրավախախտման տևողության արտադրյալի հաշվարկման միջոցով՝ Բ = Հ x Խ x Ժ բանաձևով, որտեղ՝ Բ-ն տուգանքի բազային գումարն է մրցակցային իրավախախտումների դեպքում, Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարն է, Խ-ն իրավախախտման համապատասխան ծանրության խումբն է, Ժ-ն իրավախախտման տևողությունն է:

*Ապրանքի իրացումից ստացված հասույթ.*

Մեթոդաբանության 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքների իրացումից ստացված հասույթ է համարվում իրավախախտման առարկա հանդիսացող կամ իրավախախտման մեջ ներգրավված ապրանքների և դրանց փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 18-րդ կետի համաձայն՝ իրավախախտման նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի չափի հաշվարկումն իրականացվում է

իրավախախտման դադարեցման պահին նախորդող, բայց ոչ ավելի քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի ապրանքի իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի չափից:

Տվյալ պարագայում Վարույթը հարուցելու մասին թիվ 283-Ա որոշման ընդունմանը նախորդող տարվա՝ 2020 թվականի Ապրանքների և դրանց փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացում Ընկերությունը չի ունեցել, իսկ -ն իրացրել է ընդհանուր դրամի չափով «ECO» մակնշմամբ ապրանքներ:

Հաշվի առնելով, որ Ապրանքների իրացումը Ընկերությունը սկսել է ից, հաշվարկումն իրականացվում է Ընկերության կողմից -ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Ապրանքների և դրանց փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացումից ստացված հասույթի չափով, որը ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ կազմել է դրամ: Մասնավորապես՝ Ընկերությունն իրացրել է «ԷԿՈՍ» մակնշմամբ կիլոգրամ թարմ բուդ՝ ընդհանուր դրամ արժեքով, թարմ թև կիլոգրամ՝ ընդհանուր դրամ արժեքով, կիլոգրամ թարմ դոշ՝ ընդհանուր դրամ արժեքով, կիլոգրամ թարմ պաղեցված հավ՝ ընդհանուր դրամ արժեքով, հատ թարմ ճուտ՝ ընդհանուր դրամ արժեքով, կիլոգրամ թարմ ֆիլե՝ ընդհանուր դրամ արժեքով և տուփ ձու՝ ընդհանուր դրամ արժեքով:

*Իրավախախտման ծանրության խումբը.*

Հիմք ընդունելով Մեթոդաբանության 20-րդ կետի 3-րդ ենթակետը՝ սույն գործով ծանրության խումբը պետք է հաշվարկել 2.5 տոկոս դրույքաչափով:

*Իրավախախտման տևողությունը.*

Իրավախախտման տևողությունը հաշվարկելիս հիմք են ընդունվում Մեթոդաբանության 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերը: Սույն գործով Ընկերության կողմից իրավախախտում կատարվելու սկզբնաժամկետ է

Վերոնշյալից բխում է, որ տուգանքի բազային գումարը կազմում է դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

Բ= Հ x Խ x Ժ= x 2,5% x = դրամ:

*Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.*

Մեթոդաբանության 31-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը դիտարկում է ծանրացնող և մեղմացնող հանգամանքները և վարչական ակտում արտացոլում միայն այն հանգամանքները, որոնք հաստատվել են համապատասխան վարույթի ընթացքում:

Մեթոդաբանության 32-րդ կետի համաձայն՝ մեղմացնող հանգամանքի առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

Մեթոդաբանության 27-32-րդ կետերով սահմանված են պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Մեթոդաբանության 29-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ պատասխանատվության միջոցը մեղմացնող հանգամանք է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու փաստն ընդունելը, որը գնահատելիս հաշվի է առնվում հանգամանքը ուղղակիորեն ընդունելը, իրավախախտման հետևանքների վերացումը կամ դրանց վերացման ուղղությամբ գործողությունների ձեռնարկումը:

Տվյալ դեպքում Ընկերությունը հայտնել է, որ անբարեխիղճ մրցակցությամբ հասարակությանը մոլորեցման նպատակ չի հետապնդել և պատրաստակամ է Ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա հետագայում չօգտագործել «eoos» մակնշումը, իսկ 6 հատանոց տուփով հավի ձվի կճեպի վրա չմակնշել «ԷԿՈՍ» բառը՝ ըստ էության ընդունելով իրեն վերգրվող իրավախախտման փաստը:

Մեթոդաբանության 27-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, որն առկա է, եթե.

ա. տնտեսավարող սուբյեկտը ենթարկվել է պատասխանատվության Օրենքի 93-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նույն խախտման համար.

բ. նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը 2021 թվականի օգոստոսի 30-ին ««Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 212-Ա որոշմամբ Ընկերության գործողությունն ու վարքագիծը՝ այն է Ընկերության կողմից 10 հատանոց տուփով «NATURE FOOD» անվանումով և «ECO» նշումով հավի ձու, 10 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, 6 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, «eco» մակնշումով հավի դոշի ֆիլե, «eco» մակնշմամբ «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև» և «պաղեցված հավի դոշ» ապրանքների իրացումն այն դեպքում, երբ այդ ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, որակել է որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և Ընկերության նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում:

Սույն իրավախախտման մասով որպես մեղմացնող հանգամանք հաստատվել է տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու փաստն ընդունելը, իսկ որպես ծանրացնող հանգամանք հաստատվել է տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը:

Այսպիսով, ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը կազմում է 5%, իսկ մեղմացնող հանգամանքներինը՝ 5%:

***Տուգանքի հաշվարկը.***

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

S= Բ + Բ x (Ծ - Մ) = + x (5%-5%) = դրամ:

***3) Ընկերությանը հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ***.

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Տվյալ պարագայում Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Ընկերությունն առանց օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրերի (սերտիֆիկատների) «eoos» և «ԷԿՈՍ» բառերի մակնշումներով Ապրանքների իրացման միջոցով դրսևորել է հասարակության մոլորեցման գործողություն, իսկ Վարույթի շրջանակներում Ընկերությունը հայտնել է, որ պատրաստակամ է Ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա հետագայում չօգտագործել «eoos» մակնշումը, իսկ 6 հատանոց տուփով հավի ձվի կճեպի վրա չմակնշել «ԷԿՈՍ» բառը և նշված փոփոխությունները կիրականացվեն շուրջ մեկ ամսյա ժամկետում: Այսինքն, Ընկերության կողմից «eoos» մակնշմամբ Ապրանքների և ձվի կճեպի վրա «ԷԿՈՍ» բառի մակնշմամբ հավի ձվի իրացումը չի դադարեցվել: Բացի այդ, Վարույթի շրջանակներում պարզ է դարձել, որ www.araxpf.am կայքում Ապրանքները ներկայացվում են «ԷԿՈս» և «ECOs» ապրանքային նշանների ներքո, իսկ նույն կայքի «ինտերնետ խանութ» բաժնում Ապրանքները ներկայացվում են որպես «էկո»: Մասնավորապես՝ «էկո էքստրա 15 տեղանոց», «էկո էքստրա 6 տեղանոց», «էկո էքստրա 10 տեղանոց», «էկո Ափսե ֆիլե (թարմ)», «էկո Ափսե թև (թարմ)», «էկո Ափսե բուդ (թարմ)», «Հավ պաղեցված էկո»:

Այսպիսով, վերոնշյալ հանգամանքների համադրության արդյունքում և հիմք ընդունելով թիվ 395-Ն որոշումը, Հանձնաժողովն արձանագրում է, որ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության համար Ընկերության նկատմամբ անհրաժեշտ է նշանակել 4 817 823 (չորս միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր քսաներեք) դրամի չափով տուգանք, և հանձնարարել մեկամսյա ժամկետում դադարեցնել «eoos» և «ԷԿՈՍ» բառերի մակնշումներով Ապրանքների իրացումը, այդ թվում՝ այլ տնտեսվարող սուբյեկտների միջոցով դրանք իրացնելու դեպքում գրավոր հետ կանչել, ինչպես նաև www.araxpf.am կայքում և առկայության դեպքում Ընկերության տիրապետության տակ գտնվող այլ տեղեկատվական հարթակներում դադարեցնել «հավի ձու», «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքների առնչությամբ «eoos», «ԷԿՈՍ», «ECOs», «ԷԿՈս» և «էկո» բառերի օգտագործումը:

***7. Եզրափակիչ մաս.***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 101-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության կողմից «eoos» և «ԷԿՈՍ» մակնշմամբ 6 հատանոց տուփով հավի ձու, ինչպես նաև «eoos» մակնշմամբ «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքների իրացումն այն դեպքում, երբ տվյալ ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանքներ, որակել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ նշանակել 4 817 823 (չորս միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր քսաներեք) դրամի չափով տուգանք:

3. Հանձնարարել «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերությանը՝

1) մեկամսյա ժամկետում շտկել Օրենքի խախտումը՝ դադարեցնել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրն արտադրված «eoos» և «ԷԿՈՍ» մակնշմամբ 6 հատանոց տուփով հավի ձու, ինչպես նաև «eoos» մակնշմամբ «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքների իրացումը, այդ թվում՝ այլ տնտեսվարող սուբյեկտների միջոցով դրանք իրացնելու դեպքում գրավոր հետ կանչել.

2) մեկամսյա ժամկետում շտկել Օրենքի խախտումը՝ www.araxpf.am կայքում և առկայության դեպքում Ընկերության տիրապետության տակ գտնվող այլ տեղեկատվական հարթակներում դադարեցնել «հավի ձու», «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքների առնչությամբ «eoos», «ԷԿՈՍ», «ECOs», «ԷԿՈս» և «էկո» բառերի օգտագործումը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված հանձնարարությունները կատարելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Հանձնաժողովին՝ ներկայացնելով հիմնավորող ապացույցներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշման 2-րդ կետով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարելու, իսկ 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով տրված հանձնարարությունները դրանցում սահմանված ժամկետներում կամովին չկատարվելու դեպքում ենթակա են հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. ապրիլի 11
Երևան